# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, 0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19, հեռ.՝ ( +374 11) 51 33 50, էլ. փոստ՝ artak.manukyan@parliament.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. օրենքի նախագիծը,
2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը,
3. գործող օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ տեղեկանքը:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները, և իրավունքի կամ արտոնության իրականացման կամ տրամադրման դիմաց տրվող հատուցումները, ապահովագրավճարներն ու ապահովագրական հատուցումները, ընդունվում են և իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:»:

2) լրացնել նոր՝ 9-րդ մաս.

«9. Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրված արտարժութային վարկերի և արտարժույթով ներգրավված ավանդների գծով տոկոսագումարների վճարումները՝ վարկառուի կամ ավանդատուի ցանկությամբ, արտարժույթով արտահայտված արժեթղթի հիման վրա կնքված ռեպո պայմանագրերի գծով վճարումները (փոխանցումները), ածանցյալ ֆինանսական գործիքների գծով վճարումները (փոխանցումները), կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արտարժութային պարտատոմսերի գնանշումները և դրանց գծով վճարումները (ներառյալ՝ արժեկտրոնները) կարող են իրականացվել այն արժույթով, որով ստանձնվել է պարտավորությունը, բացառությամբ Կենտրոնական բանկի սահմանած դեպքերի:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**Առկա իրավիճակը և հիմնախնդրի նկարագրությունը**

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով բանկերին և վարկային կազմակերպություններին թույլատրվում է արտարժութային վարկերի և արտարժույթով ներգրաված ավանդների տոկոսագումարները հաճախորդի ցանկությամբ համապատասխանաբար ստանալ կամ վճարել այն արժույթով, որով տրամադրվել է վարկը կամ ներգրավվել է ավանդը: Սակայն բաց է մնացել նույն բանկերի և վարկային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց կողմից թողարկված արտարժութային պարտատոմսերի արժեկտրոնների (տոկոսագումարների) հարցը, որոնք վճարվում են ՀՀ դրամով: Սա մի շարք հացեր ու խնդիրներ է առաջացնում: Նաև հստակեցման կարիք ունի ռեպո պայմանագրերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով նախատեսվող վճարումներն արտարժույթով կատարելու հնարավորության հարցը:

Նախ՝ եթե արտարժութային ավանդի դիմաց հնարավոր է տոկոսագումար վճարել արտարժույթով, ապա ինչու՞ չի կարելի ավանդին փոխարինող պարտատոմսի դիմաց նույնկերպ վճարել արտարժույթով:

Երկրորդ, եթե արտարժութային վարկի տոկոսագումարը հնարավոր է ստանալ արտարժույթով, ապա ինչու՞ չի կարելի նույն վարկառուի թողարկած պարտատոմսի տոկոսագումարը ևս ստանալ արտարժույթով:

Երրորդ, արտարժութային պարտատոմսերի դեպքում օտարերկրյա ներդրողների համար խնդիր է դրամային հաշիվ ունենալը տոկոսագումարները ստանալու համար:

Չորրորդ, պարտատոմսերի դեպքում պարտադիր դրամային հաշիվ ունենալու պահանջը խնդիր է նաև տեղական ներդրողների համար, քանի որ այդ հաշվի սպասարկման վճարն անհարկի ֆինանսական ծախս կարող է դիտվել՝ միաժամանակ նվազեցնելով պարտատոմսի՝ որպես ներդրումային գործիքի գրավչությունն ավանդի համեմատ:

Հինգերորդ, ռեպո պայմանագրերի և ածանցյալ ֆինանսական գործիքների դեպքում հստակեցման կարիք ունի ստանձնած պարտավորությունն ու վճարումները նույն արժույթով կատարելու հնարավորության հարցը:

**Առաջարկվող լուծումը**

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ռեպո պայմանագրերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների և դրանցով նախատեսված վճարումների, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արտարժութային պարտատոմսերի գնանշումները և դրանց դիմաց արժեկտրոնների վճարումները թույլատրել իրականացնել այն արժույթով, որով ստանձնվել է պարտավորությունը: Միաժամանակ օրենքի ձևակերպումներում առաջարկվում են որոշակի հավելյալ հստակեցումներ:

Այս նպատակով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն առաջարկվում է վերադարձնել մինչև 2017 թ-ի փոփոխությունը եղած խմբագրմանը, իսկ նույն մասում 2017 թվականին կատարված փոփոխություններն ու դրանց տրամաբանական շարունակությունը հանդիսացող լրացուցիչ հավելումները սահմանել նոր՝ 9-րդ մասով:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## ՓՈՓՈԽՎԱԾ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 6. Հայաստանի Հանրապետության արժույթով գործարքների իրականացումը Հայաստանի Հանրապետությունում**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների վճարումների, գույքի գնահատման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

~~2. Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները, բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների տրամադրած արտարժութային վարկերի և արտարժույթով ներգրավված ավանդների, որոնց տոկոսագումարները վարկառուի կամ ավանդատուի ցանկությամբ վճարվում են այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը կամ տրամադրվել է վարկը, բացառությամբ Կենտրոնական բանկի սահմանած դեպքերի, և իրավունքի կամ արտոնության իրականացման կամ տրամադրման դիմաց տրվող հատուցումները, ապահովագրավճարներն ու ապահովագրական հատուցումները, ընդունվում են և իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:~~

2. Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները, և իրավունքի կամ արտոնության իրականացման կամ տրամադրման դիմաց տրվող հատուցումները, ապահովագրավճարներն ու ապահովագրական հատուցումները, ընդունվում են և իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնեհավաք կապիտալում դրամական (փողային) ներդրումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական (փողային) շահումները կարող են գովազդվել և տրվել միայն Հայաստանի Հանրապետության դրամով:

5. Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունից կամ Հայաստանի Հանրապետության օդային տարածքով չվերթեր (կանոնավոր, ոչ կանոնավոր, չարթերային) իրականացնող օդանավեր շահագործող ընկերություններին (ավիաընկերություններին) մատուցվող հետևյալ ավիացիոն ծառայությունների փողային գնանշումները կարող են կատարվել արտարժույթով՝

ա) օդանավերի ուղեկցման ծառայություններ, թռիչքի, վայրէջքի և լուսավորման, կանգառների կառավարման, շարժական և մեխանիկական սանդուղքների ներդրման և գործարկման, տելեսկոպ կամուրջի, օդանավերի վերգետնյա սպասարկման ծառայություններ (այդ թվում՝ օդանավեր քարշակելու ծառայություն).

բ) ուղևորի, ուղեբեռի, բեռի և փոստի վերգետնյա սպասարկում և հաշվառում.

գ) ավիացիոն անվտանգության և օդանավերի պահպանման ծառայություններ.

դ) օդանավերի կոմունալ ծառայություններ.

ե) վառելիքի և հեղուկների մատակարարում.

զ) հատուկ անիվավոր փոխադրամիջոցներով մատուցվող ծառայություններ.

է) Հայաստանի Հանրապետության օդային տարածքով անցնող միջազգային օդային մայրուղիներով տարանցիկ և Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ չվերթող օդանավերին մատուցվող աերոնավիգացիոն ծառայություններ.

ը) Հայաստանի Հանրապետության օդանավակայանների 20 կմ շառավղով շրջակայքում իրականացվող թռիչք-վայրէջքի փուլում մատուցվող աերոնավիգացիոն սպասարկման ծառայություններ:

Սույն մասում նշված դեպքում ավիացիոն ծառայությունների դիմաց վճարումները ոչ ռեզիդենտ ավիացիոն ընկերությունների կողմից կարող են կատարվել արտարժույթով:

6. Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունից կամ Հայաստանի Հանրապետության օդային տարածքով չվերթեր իրականացնող օդանավեր շահագործող ընկերությունների կողմից մատուցվող ուղևորների, բեռի և փոստի փոխադրման ծառայությունների փողային գնանշումները համակարգչային բազայում կարող են իրականացվել արտարժույթով:

7. Անկանխիկ վճարումներ նախատեսող և գրավոր ձևով կնքված պայմանագրերում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով, եթե այդ պայմանագրերը կնքվել են իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռեզիդենտի և իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ոչ ռեզիդենտի միջև:

8. Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործարքների գնանշումները կամ վճարումները, ինչպես նաև ազատ տնտեսական գոտու շահագործողների և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերի) միջև կատարվող գործարքների գնանշումները կամ անկանխիկ վճարումները՝ անկախ դրանց գումարային մեծությունից, կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով:

9. Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրված արտարժութային վարկերի և արտարժույթով ներգրավված ավանդների գծով տոկոսագումարների վճարումները՝ վարկառուի կամ ավանդատուի ցանկությամբ, արտարժույթով արտահայտված արժեթղթի հիման վրա կնքված ռեպո պայմանագրերի գծով վճարումները (փոխանցումները), ածանցյալ ֆինանսական գործիքների գծով վճարումները (փոխանցումները), կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արտարժութային պարտատոմսերի գնանշումները և դրանց գծով վճարումները (ներառյալ՝ արժեկտրոնները) կարող են իրականացվել այն արժույթով, որով ստանձնվել է պարտավորությունը, բացառությամբ Կենտրոնական բանկի սահմանած դեպքերի: